


ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ԵՒ ՇՈԹՈՌԿԱՆՑ ՏՈՂԱՐԸ

Յովհաննու սկզբնադարդի ճակատը նոյնպէս քառանկիւնի կլաոխորան է, ձախից երկար լւն, խի աջից լուսանցքի գաւազանադարդը: Քառանկիւնու միջին տարածութիւնը ծածկուած է իրար մէջ հիւսուած երկրաչափական բոլորակներով կապոյտ, մանիշակագոյն եւ կարմիր գոյ-

զուտ արեւելեան բնոյթ ունի, ազատ բիւզանդական ազդեցութիւնից, եւ աւելի մօտ սասանեան եւ միջագետական-արաբական աւանդներին (պատկ. 5, 6, 7): Նոյնն են մատնանշում նաեւ թռչունների այլ եւ այլ ձևակերպութիւններն իբրեւ լուսանցքի զարդեր (7, 8, 9): Գործադրում է, բայց



Պատկեր 5

ներով. չրջագծերը սպիտակ կամ ոսկեգոյն նուրբ գծերով երկուսի բաժանուած: Քառանկիւնու ընդհանուր չրջանակը մոյգ կապոյտի վերայ աւելի բաց կապոյտով ոլորապտոյտ արմաւենիկ է:


Սրանց հետ եւ լուսանցքի զարդերը ցոյց են տալիս, որ Իգնատիոսի արուեստը

քիչ չափով, խեցոսկի՝ կարմիր յատակի վերայ, գոյները կապոյտ, մանիշակագոյն, կանաչ եւ կարմիր, վերջինը միայն գնդակների, օղակների կամ կանթերի համար, բոլորն էլ անփայլ, լուրջ, դիմացկուն եւ տպաւորիչ իրենց համադրութեամբ: Սիրած մօտիւններն են, ինչպէս տեսանք,

արմատների՝ թերթի կեղրոնում կարմիր գնդակով (պս. 3, 4. լուս. 6), եռատերև կամ հնգատերև (պս. 3, 4) թերթերի բաժանման տեղում կարմիր գնդակով, արմատների և բուսական զարդերի ցողունների վերայ զոյգ գծերով օղակաւորում կամ կանթեր, որ երևան է գալիս սառանեան արծաթի գործերի⁽¹⁾ և դասական շրջանի (մինչ արաբ. արշ.) բուսական զարդաքանդակների մէջ (պս. 4), ութամեկի

երկրաչափական եւ այլ ձեւերով (պս. 3, 4)։

Ուշադրութեան արժանի է աղատ սիւնների վրայ, սրածայր գմբեթով, երկյարկանի մատուռը, որ ԺԳ. և ԺԴ. դարերում ընդհանրացած, բայց ծագմամբ հին, ԺԱ. դարու ճարտարապետական և մանրանկարչական տուեալներով յայտնի, կապուած արուեստի որոշ հոսանքի հետ։



Պատկեր 6

և փակագծի կողերի (մէջք մէջքի) նմանութիւն բերող զարդեր (պս. 5. Ժ. տառի վերայ, պս. 3. լուս. զարդը), սվաստիկաձեւ եւ երկրաչափական վարդեակներ (պս. 3, 4), ձուածեններից կազմուած կամ սրտաձեւերից կազմուած խաչաձեւեր (պս. 3, 4), պարզ եւ բարդ հիւստեածքներ,


Ե.

Իգնատիոսի մի ուրիշ գործից հասել է մի հատակոտոր, Ա. Կորնթ. Ա. 28-Բ. 3. Ձի գէսն իմ խափանեցէ... եւ ես տկարութեամբ եւ երո, որ այժմ էջմ. N 879/928. Հց. ձեռագրի կազմի երեսն է։ Գրչութիւնը ճիշդ նոյնն է, ինչ որ Բագնայրի աւետարանինը, միայն սա քիչ փոքր է, և իւրաքանչիւր երեսը 16 տողից է բաղկացած։

(1) Westotchnoje Serebro. Atlas. Smirnow. տախտակ L. 84. LXXIII. 130, LXVI. 111, LXXII. 128. CXXX. 325 եւայլն։

Հատակոտորի ներքևի լուսանցքում սքանչելի փոքր երկաթագրով զրիչը հետևեալ նկատողութիւնն ունի. «Զիգնատիոս և Նիքիտափոր յաղաթս յիշեալիք»: Բրիտափորը նորա աշխատակիցն է, թէ աշակերտը, չգիտենք, մենք կը տեսնենք, իմպոնից աւետարանի յիշատակարանից, որ նա մի աշակերտ ունէր Յովսէփ աւունով:

Տ. Աւետիքեան Սմբատի «Զեռագիր» ներքի ցուցակ նոր Զուղայի» անտիպ աշխատութիւնից, թ. 154. հետևեալ մանրամասնութիւններն ունինք այդ ձեռագրի մասին. «Թերթք 406, 33x5x24սմ., երկսիւն՝ 17 տող: Մազաղաթ խիստ ճերմակ, մաքուր, մետրական երկաթագիր 0,5սմ., հարուստ պատկերազարդ, գոյներով և ոսկեզօծ: Սկիզբը 14 տնօրինական պատկերներ ապա չորս աւետարանիչք, 5 խո-



Պատկեր 7

Ձ.

Անշուշտ, զգալի է հայ արուեստի պատմութեան համար «Հռոմոսի ոսկե-տուփ աւետարանի», ինչպէս և Վենետիկի և Բագնայրի աւետարանների կարեւոր մասերի կորուստը, բայց մեղմանում է մասամբ այդ ցաւը, որ Իգնատիոսի մի երրորդ գործը, այժմ ն. Զուղայի Ամենափրկչի N 36 աւետարանը, անմիտա հասել է մեզ և հնարաւորութիւն կայ լիովին պարզել և գնահատել նորա արուեստը նաև պատկերազարդական տեսակէտով:


րան, լուսանցազարդերով: Գրիչն է Իգնատիոս⁽¹⁾: Բերում է և յիշատակարանները, որ դրուած է ստացողի բերանից. Բանաւորը և իւր կենակիցը Աղատիկին յուսալով Աստուծոյ ողորմութեան՝ ստացել են իրենց արդար վաստակով այս աստուածային գանձը «ի պայծառութիւն սրեկեղեցւոյ և ի վայելութիւն մանկանց առաքաստի»: Խնդրում է յիշել իրեն հետ «և

(1) Այս տեղեկութիւնները բաղել ենր Հ. Ակին-եանի արտագրութիւնից:

զանուցանաւոյն իմ զբարեպաշտ իշխանաց
 իշխանն զպատրոնն Դաւիթ Շոթոռեկանց և
 զորդիսն իւր զքաջ և զանուանի պատրո-
 նաց պատրոն Գրիգոր և զորդիսն իւր
 զԱմրատ և զԱրջուն և զԱրզուխաթուն».
 նրանք անգաւակ լինելով, ստանում են

և ի սբ. Յակոբ ի ձեռն Պաւղոս վրդ. ին որ
 է ամենայն բարեաց պատճառ և ածապա-
 տիւ տր. Արասայ եպս. ի և հաւր Սարգսի
 հեղի և ամենաբարոյ և այլ սբ., միաբան
 եղբարց»:

Աւետարանը գրուել է 1226 (= 1236)



Պատկեր 8

իրբե «զաւակ ի Սիոն» «զաժախաւս մատ-
 եանս զայս պայծառ նիւթով և գեղեցիկ
 զրով և ընտիր բանիք ցանկալի ամենայն
 տեսողաց», «և աւանդեցի զսա ի հրեշ-
 տակարնակ ուխտն իձկաւնս որ Տիկորայ
 վանք կոչի ի սբ. Սարգիս և ի սբ. Գրիգոր

թուին, ի զառն և ի նեղ ժամանակի յո-
 բում ամի տուա մայրաքաղաքն Անի»
 Թաթարներին ձեռքով. համառօտ նկարա-
 զրում է «աստուածասաստ» այն բարկու-
 թիւնը, որ եկաւ Հայոց, Վրաց և Տաճ-
 կաց աշխարհներին վերայ «ի մարդագէմ


գաղանաց», իրենց զօրավիգն ունենալով «գեւք և սատանէք»: «Անթիւ էր աւելումն քաղաքաց և գաւառաց մինչեւ ի մեր սահմանս որ էր Թուականիս Ոջն»:

Ի վերջոյ Բռնաւորը «մեծ հաւատով և յուսով» խնդրում է «սիրաբար ի սբ. և ի պատուական եղբարց», երբ Հոգւոյ դաւրտեանը կը վերջաւորուի աւետարանի ընթերցումը՝ «երանի որում Թողութիւն տացէք և զպատարագին պատենն դուք հոգացէք»:

րեզակն և յիշատակ անջնջելի պարոն Բռնաւորին, ամէն»:

Իզնատիտն ունի և իւր յատուկ յիշատակարանները. 16ա. 200բ. և 403ա. Բերում ենք միայն առաջինը. «Զիզնատիտս գծող սբ. աւետարանիս և զծնողս նր. յիշեալ, ո՛վ եղբայր, յորժամ կարդաս. ընդ նմին և զաշակերտ նորա զՅովսէփ մի մուսանայցես ի բարի կամաց և ամ. զձեզ յիշէ ի բարի»:

Երկու ամուսինների և նրանց նուիրա-



Պատկեր 9

Յիշատակարանը փակւում է հետեւեալ հատուածով. «Արդ տր. Արասս եպս. ևւ վրդս. Պաւղոս և հայր Գրիգոր և այլ միաբանքս հաստատեցաք յեկեղեցւոյ զրանս որ զեղիական երկուշաբթ աւրն զմին պատարագն անխորան յամենայն ամի Բռնաւորին առնեն. ով և լինի հայր. կատարէիք զրոյս աւրհնեալ եղիցին և խափանիչքն դատապարտեսցին յայ. զի քս. սբ. աւետարանս (!) այս պայծառ՝ է քան զա-

րեւած աւետարանի մասին տեղեկութիւն ունինք նաև Խժկոնից սբ. Սարգսի վանքի հարաւային պատի մի արձանագրութեան մէջ, որ մէջ ենք բերում ամբողջութեամբ նմանահանութեան հետ (պատ. 10. ձախ կամարի տակ):

1. ի Թուին: Ոջն:


2. Շնորհիւ ևւ ող

3. որմութրն այ ևս բռնաւորս

4. ծառայ քի ևւ ամուսին իմ Աղատի

5. կին ողորմութիւն տաճարէն պարտնի իմո Գրիգ
6. որո միարամեցաք սր ուխտիս իմը՝ կանից եւ ընծաւ
7. ցաք ի սմա զմեր զանձազին այգին ուր ի Մրեն է (զուցէ «ե» փոխանակ «է») զոր
8. Աղբորն կոչեն եւ աւետարն մեծազին ի ձեռն ամապատ
9. իւ հպիսկոպոսիս տր Աբասա եւ այլ սր հզարացս եւ սօքա

Խնդիրը պարզ է, որ արձանագրութեան մէջ յիշուած աւետարանը նոյնն է, որի մասին խօսք եղաւ վերեւ. չորս տարի յետոյ երկու ամուսինները նորից միարանում են իմեկոնից ուխտին՝ եւ այս անգամ նուիրում իրենց զանձազին այգին, «որ ի Մրեն», բայց արձանագրութեան մէջ յիշուած է և նախկինը՝ աւետարանի նուիրաբերութիւնը: Եթէ լինէր մի այլ աւետարան, կը շեշտուէր այդ մասին որեւէ կեր-



Պատկեր 10

10. փոխարէն հատուցին մեզ զՂազարու տաւնին պատար
11. ազն մինչև ի դալուստ բանին այգկեսն ինձ առն
12. են Բոնաւորիս եւ զկէսն զուգակցի իմո Աղատիկնա
13. Արդ որ զգրեալս մեր կատարեն աւրհնեալ լիցին
14. ի քէ այ եւ որք խափանեն որոչեալ լիցին ի փառաց որդ
15. ոյն այ⁽¹⁾.

պով, քանի որ նուիրաբերող և ստացող անձնաւորութիւնները նոյն են, ինչպէս և նոյն է տեղական իշխանը «պարոն Գրիգոր», որ յիշատակուած էր աւետարանի մէջ, միայն տոանց հօրը՝ Դաւիթ Շոթրուկանցի, որ այդ ժամանակ վախճանուած էր, հաւանօրէն:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

(Շար.)

(1) Ընդգծուած տառերը այս եւ հետեւեալ արձանագրութիւնների մէջ կցուած են իրար: